

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հիսուն տարի է անցել այն օրից, երբ Հայաստանի հողի վրա ծագեց Հոկտեմբերյան հեղափոխության պայծառ արևը:

Մեր ժողովուրդը ձեռք բերեց խաղաղ շինարարության հնարավորություն, սկսեց նոր կյանք սովետական հղբայրական ժողովուրդների ընտանիքում, կարողացավ ամբողջապես նվիրվել տնտեսական և մշակութային շինարարությանը, նա սկսեց ստեղծագործել կյանքի բոլոր բնագավառներում, հետզհետե ձեռք բերելով իրար հաջորդող նվաճումներ: Մեր ժողովրդի գլխավոր մտահոգություններից մեկը սովետական իշխանության առաջին օրերից եղել է և մնում է գիտության զարգացումը:

Պատմական բախտի բերումով Հայաստանի այժմյան տերիտորիայում անցած վերջին դարերի ընթացքում չի եղել ոչ մի գիտական կենտրոն, կազմակերպված ոչ մի գիտական աշխատանք: Մինչև անգամ քսաներորդ դարի սկզբներին Հայաստանում միակ գիտական գործունեությունը արտահայտվում էր նրանով, որ էջմիածնի ճեմարանում հատուկ կենտ դասախոսներ զբաղվում էին հայագիտական ուսումնասիրություններով:

Բացարձակապես ոչ մի գիտական աշխատանք չէր կատարվում բնական և մաթեմատիկական գիտությունների ասպարեզում: Ինչ վերաբերում է տեխնիկական գիտություններին, ապա հանդիսանալով ցարական Ռուսաստանի ամենահետամնաց մասերից մեկը, ունենալով թույլ զարգացած արդյունաբերություն, Հայաստանը այն ժամանակ երազել անգամ չէր կարող տեխնիկայի բնագավառում որևէ ինքնուրույն քայլերի մասին:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ինչպես ժողովրդական լուսավորության, այնպես էլ տնտեսության զարգացման տեսակետից Արևելյան Հայաստանում վիճակը այլ էր, քան Արևմտյան Հայաստանում, որը գտնվում էր խիստ հետամնաց թուրքական բռնապետության տիրապետության տակ: Կարելի է պնդել, որ մեծ չափով հետ մնալով Ռուսաստանի կենտրոնական մարզերից, Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը չէր զիջում Թուրքիայի միջին մակարդակին:

Այն գործոնների թվում, որոնք սովետական կարգերի հաստատումից հետո ապահովեցին գիտության վերելքը Սովետական Հայաստանում, պետք է նշել՝

ա) երեխաների պարտադիր ուսուցումը, բ) պետական համալսարանի և այլ բուհերի հիմնադրումը ու զարգացումը սովետական իշխանության հենց առաջին տարիներին, գ) ժողովրդական տնտեսության աննախընթաց վերելքը,

* Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման 50-ամյակին նվիրված՝ ՀՍՍՀ ԳԱ հորեկյանական նստաշրջանում կարդացած զեկուցումից:

որը գնալով ավելի ու ավելի խիստ պահանջեց գիտական մտքի ու գիտական աշխատանքի զարգացում, չ) կուսակցության և կառավարության ձգտումն ու անսասան կամքը՝ կառուցելու մեր հասարակական ու տնտեսական ողջ կյանքը գիտական հիմքերի վրա, օգտագործելով գիտության ընձեռած բոլոր հնարավորությունները, ե) այն հստակաբանքը, որ շնորհիվ սովետական ժողովուրդների բարեկամության հնարավորությունն ստեղծվեց հանրապետության գիտական կադրերի պատրաստումը անցկացնել ոչ միայն Հայաստանում, այլև ամեն մի մասնագիտության գծով այն հանրապետությունում, որտեղ այդ մասնագիտությունը եղել է առավել զարգացած: Ծնորհիվ դրա մենք ծախսում էինք տվյալ մասնագիտության զարգացման համար շատ ավելի քիչ ժամանակ, քան կլինեք նման փոխօգնության բացակայության դեպքում:

Նշելով այն հսկայական դերը, որ խաղացել է և շարունակում է խաղալ ժողովուրդների բարեկամությունը Հայաստանի գիտության մակարդակը բարձրացնելու գործում, ես ուզում եմ առանձնապես նշել ռուս գիտնականների դերը, որոնք ոչ մի ջանք չխնայեցին մեր գիտական կադրերի պատրաստման ու կատարելագործման համար: Բազմաթիվ ռուս ակադեմիկոսներ, պրոֆեսորներ և այլ խոշոր մասնագետներ այդ նպատակին նվիրեցին իրենց թանկագին ժամանակի զգալի մասը: Լավագույն ռուս գիտնականներ ժամանել են Հայաստան՝ մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին կամ դասախոսելու մեր բարձրագույն դպրոցներում: Որպես օրինակ կարելի է բերել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի աշխատանքային պրեզիդենտ Կելդիշին, որը պատերազմից առաջ մի ամբողջ դասընթաց է կարդացել Երևանի պետական համալսարանում:

Կարևոր է նաև, որ հանրապետության կուսակցական ղեկավարությունը և կառավարությունը հնարավոր գտան խոշոր միջոցներ հատկացնել գիտության համար՝ աշխատանքային գիտության պահանջներին համապատասխան անհրաժեշտ նյութական բազա ստեղծելու նպատակով: Կառուցվել են գիտական հիմնարկների բազմաթիվ շենքեր, ձեռք է բերվել գիտական թանկարժեք սարքավորում, երաժշտական մի շարք ունիկալ տեղակայքեր, որոնք ստեղծվել են հատկապես Հայաստանի գիտական հիմնարկների համար: Այս բոլոր պայմանների ստեղծման համար մենք պարտական ենք այն կարգերին, որ հաստատվեցին Հայաստանում 50 տարի առաջ:

Այս կապակցությամբ թույլ տվեք հայտնել մեր խորին և ամենաանկեղծ շնորհակալությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և Սովետական Հայաստանի կառավարությանը, որոնք ցույց են տալիս գիտության զարգացման գործին համակողմանի աջակցություն:

Այս ղեկուցման նպատակը չէ տալ Սովետական Հայաստանում գիտության և գիտական մտքի մանրամասն սլաութությունը: Նշենք այստեղ միայն մի քանի կարևոր փաստեր:

1) Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո տարբեր հանրապետություններից և երկրներից սեփական ցանկությամբ և Հայաստանի կառավարության հրավերով մշտական աշխատանքի համար Հայաստան տեղափոխվեցին մի շարք տաղանդավոր գիտնականներ, ինժեներներ և արվեստագետներ, որոնք անմիջապես լծվեցին աշխատանքի պետական համալսարանում, մշակութային հիմնարկներում և շինարարության մեջ:

Բավական է հիշել այստեղ լեզվաբան Աճառյանին, պատմաբան Մանանդյանին, քիմիկոս Ղամբարյանին, երկրաբան Կարապետյանին, հիդրոշինարար Տեր-Աստվածատրյանին, ճարտարապետ Թամանյանին, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանին, բժիշկ Լևոն Հովհաննիսյանին և շատ ուրիշների, որոնք անջնջելի հետք թողեցին մեր գիտության, շինարարության և մշակույթի պատմության մեջ: Նրանց թվում էր նաև մեր ակադեմիայի հարգարժան անդամ, սովետական և առանձնապես հայ մշակույթի անխոնջ մշակ, մեր սիրելի Վարպետ Մարտիրոս Սարյանը:

Հայտնի է, թե ինչպիսի ազահություն էր իմպերիալիստական պետությունները իրենց գաղութները թալանելու այլ ձևերի հետ միասին օգտագործել են «ուղեղների արտահոսք» գաղութներից: Մեր ժամանակներում անկախություն ձևով բերած նախկին գաղութները մեծ մասամբ դեռ չեն կարողանում կանգնեցնել այդ արտահոսքը: Ուղեղների արտահոսքը նախկին գաղութներից շարունակվում է և ծառայում է պաղութականության շահերին, մեծապես խանգարելով զարգացող երկրների տնտեսական և մշակութային վերելքին:

Իր մինչսովետական բազմադարյան պատմության ընթացքում Հայաստանը բառացիորեն քամվել է, ենթարկվելով ուղեղների արտահոսքին և զրկվելով իր սեփական ստեղծագործող մարդկանցից:

Ահա թե ինչու ուղեղների այն ուժգին ներհոսքը, որ կատարվեց սովետական իշխանության առաջին տարիներին և արտահայտվեց որպես գիտության, տեխնիկայի, արվեստագիտության բազմաթիվ խոշոր գործիչների վերադարձ դեպի Հայաստան, ոչ միայն մեծապես նպաստեց հանրապետության տնտեսական ու մշակութային վերելքին, այլև ցուցադրեց պետականության վերականգնման ամբողջ նշանակությունը հայ ժողովրդի համար:

2) Շնորհիվ մի շարք պատճառների 1920-ական և 1930-ական թթ. Հայաստանում հասարակական գիտությունները ներկայացված էին ավելի փայլուն դեմքերով, քան մյուս գիտությունները: Հետևաբար այդ շրջանում հասարակական գիտությունները հասան համեմատաբար ավելի բարձր զարգացման: Այդ ժամանակ, օրինակ, տպագրվեց Հ. Աճառյանի «Արմատական բառարանը», տպագրվեցին կարևոր աշխատություններ՝ նվիրված հայոց պատմության և հայագիտության կարևոր հարցերին:

Այդ նույն ժամանակամիջոցում պետական համալսարանի և այլ բարձրագույն դպրոցների կողքին հիմնադրվում են մասնագիտական գիտական հիմնարկներ գյուղատնտեսական և բժշկության գծով: Այսպիսով, սկիզբ է դրվում գիտության և արտադրության անմիջական կապին՝ մի տենդենց, որը զնալով ուժեղանում է:

3) 1935 թվականին կազմակերպվում է Սովետական Միության գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը, որի մեջ սկսում են գործել երկրաբանության, քիմիայի ինստիտուտներ, մի քանի կենսաբանական հիմնաբևեր, իսկ հետագայում նաև Նրևանի աստղադիտարանը:

Այսպիսով հնարավորություն է բացվում կիրառական նշանակություն ունեցող գիտական խնդիրների լուծման համար: Գտնում եմ, որ չեմ սխալվի, եթե ասեմ, որ կիրառական նշանակություն ունեցող խնդիրների լուծման մեջ այդ ժամանակ լավագույն արդյունքների են հասնում մեր երկրաբանները: Շնորհիվ նրանց աշխատանքի՝ արդեն 1930-ական և 1940-ական թթ. սկզբներին հայտնաբերվում են գունավոր մետաղների, շինանյութերի և այլ հարու-

տությունների վիթխարի պաշարներ: Այդ գիծը շարունակվում է նաև հետպատերազմյան տարիներին: Ապացուցվում է, որ Հայաստանը հանդիսանում է բնական հանածոներով ամենահարուստ երկրներից մեկը ամբողջ աշխարհում:

4) Հնդամյա պլանների հաջող իրականացման շնորհիվ Հայաստանում գունավոր մետալուրգիայի, թեթև ու սննդի արդյունաբերության կողքին սկսում են զարգանալ ծանր արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են քիմիականը և մի փոքր ավելի ուշ՝ մեքենաշինությունը: Արդյունաբերության զարգացման այդպիսի ընթացքը նոր պահանջներ է առաջադրում գիտության նկատմամբ:

Հայրենական մեծ պատերազմի սկիզբը առավել պարզ է դարձնում ժամանակակից կյանքում ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների նշանակությունը:

Այսպիսի աճող պահանջներին կարող էր բավարարել միայն գիտությունը ավելի արագ և նպատակասլաց զարգացումը, որպիսին հնարավոր դարձավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրման շնորհիվ:

5) 1943 թվականի նոյեմբերին Սովետական Միության Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշմամբ հիմնադրվեց Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Բաղմիցս նշվել է այն հանգամանքը, որ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը այն դժվար պահին, երբ սովետական երկրի մի ղզալի մասը դեռ զրավված էր ֆաշիստական զորքերի կողմից, հանդիսացավ լենինյան ազգային քաղաքականության զրսերման մի նոր փալլուն օրինակ: Ակադեմիայի հիմնադրումից հետո նրան հատկացվեցին ղզալի միջոցներ Հայաստանում գիտությունը ծավալելու համար:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, խոշորագույն բանասեր և հնագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին քաջ գիտակցում էր, որ ակադեմիայի ամենակարևոր և հրատապ խնդիրներից մեկը ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների ղարգացմանը նպաստելն էր: Հենց այդ պատճառով ակադեմիայի կազմի մեջ նրա գոյության առաջին օրերին մտան ֆիզիկայի ինստիտուտը, աստղադիտարանը, ջրա-էներգետիկ ինստիտուտը, քիմիայի ինստիտուտը և նման այլ հիմնարկներ:

6) Ետպատերազմյան առաջին տասնամյակի ընթացքում մեծ թափով ղարգացան ուսումնասիրությունները ֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, մեխանիկայի և քիմիայի բնագավառներում: Ահեցին կադրեր, որոնք տիրապետում են ժամանակակից նուրբ էքսպերիմենտալ տեխնիկային: Ինստիտուտները հարստացվեցին նոր սարքավորումներով: Հիմնադրվեցին մի քանի գիտական ամսապրեր: Ստացվեցին կարևոր գիտական արդյունքներ, որոնցից շատերը ունեն ֆունդամենտալ նշանակություն: Ֆունդամենտալ գիտությունների ղարգացման շնորհիվ պայմաններ ստեղծվեցին նոր տեխնիկայի գիտական խնդիրների լուծման համար:

7) Հիսունական թվականների կեսերին Հայաստանում սկսեցին կազմակերպվել բաղմաթիվ մասնաճյուղային գիտահետադոտական ինստիտուտներ, որոնք սպասարկում են մեր երկրի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներ: Նման կազմակերպությունների թվին են պատկանում այնպիսի խոշոր հիմնարկություններ, ինչպես մաթեմատիկական մեքենաների գիտահետադոտական ինստիտուտը, կոմպլեքսային էլեկտրասարքավորման համա-

միութենական ինստիտուտը, Նրևանի էներգետիկայի ինստիտուտը, պոլիմերների համամիութենական ինստիտուտը և այլն: Այդ հիմնարկների շնորհիվ մեծասկս ուժեղացավ գիտության ազդեցությունը ժողովրդական տնտեսության պարգագման վրա: Ավելի արագ սկսեցին լուծվել տեխնիկական առաջագիմության հարցերը:

8) Միաժամանակ նոր, ավելի բարձր մակարդակի հասան տեսական հետազոտությունները: Մտեղծվեցին հետազոտության այնպիսի ունիկալ միջոցներ, ինչպիսիք են Նրևանի օդակաձև էլեկտրոնային արագացուցիչը, Բյուրականի մետրանոց աստղադիտակը և այլն: Գիտական հիմնարկներում սկսեց լայնորեն կիրառվել ժամանակակից էլեկտրոնային հաշվողական տեխնիկան: Դոհունակությամբ պետք է նշել, որ մեր հիմնարկներում գործող էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մեծ մասը արտադրվել է Հայաստանում:

9) Շնորհիվ ռադիո-տեխնիկական և օպտիկական աշխատանքների զարգացման հնարավորություն ընձեռվեց Հայաստանում անցնել նոր գիտական սպասքերի ստեղծման: Ըստ երևույթին այդ գործը գնալով ավելի կզարգանա:

10) Ճշգրիտ և տեխնիկական գիտությունների այդպիսի լայն ծավալումը իր հերթին մեծ ազդեցություն ունեցավ հայարական և կենսաբանական գիտությունների զարգացման վրա: Այսօր այդ գիտությունները մեզ մոտ ապրում են նոր վերելք, կալմելով հանրապետության գիտության կարևորագույն ուղղությունները: Նոր թավով սկսեցին աճել բժշկական և գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները:

11) Նոր պայմաններում մեծ զարգացում ստացան քիմիական և կենսաբանական գիտությունները: Այդ բնագավառներում տեսական հետազոտությունները անմիջապես շաղկապված են ժողովրդատնտեսական կարևոր խնդիրների լուծման հետ: Մեր լեռնային երկրի պայմաններում որոշ տիպի հանածոների և բնական հումքի առկայությունը տալիս է այդ բնագավառների հետազոտություններին ուրույն ուղղություն և բուլանգակություն:

12) Այսօր Հայաստանում գործում է գիտական աշխատողների մի մեծ բանակ, ավելի քան 12 հազար մարդ: Բնական է, որ նրանց ուժերի ավելի ռացիոնալ օգտագործումը հանդիսանում է կարևոր խնդիր:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանի գիտնականների աշխատանքում միշտ եղել է ուժեղ ձգտում դեպի գիտության գործնական կիրառությունը: Այդ ձգտումը ունեցել է մեր հանրապետության համար շատ մեծ նշանակություն: Մական այսօր գիտական նվաճումների պատշաճ կիրառությունը ժողովրդական տնտեսության մեջ դարձել է շատ ավելի դժվար ու բարդ խնդիր, քան այն եղել է մինչև անգամ համեմատաբար մոտիկ անցյալում: Ամեն մի նոր գիտական գաղափարի կիրառման համար անհրաժեշտ է լինում լուծել մի ամբողջ շարք տեխնոլոգիական և կոնստրուկտորական խնդիրներ: Այդ խնդիրները կարելի է լուծել միայն փորձնական արտադրությունների կազմակերպման միջոցով: Մեր մի շարք ինստիտուտներ (օրինակ, ընդհանուր և անօրգանական քիմիայի, գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի) ունեն այդպիսի փորձնական արտադրություններ: Մյուսները նույնպես սկսել են նման արտադրություններ կազմակերպել: Կասկած չկա, որ այդ երևույթը ոչ միայն կնպաստի գիտական արդյունքների ներդրմանը, այլև կխթանի մեր գիտության վերելքը առաջիկա տասնամյակներում:

Փորձը ցույց է տալիս, որ մենք հասնում ենք ամենամեծ հաջողությունների այնտեղ, որտեղ ուժերը կենտրոնացված են խելացիորեն ընտրված պրոբլեմների շուրջը:

Մյուս կողմից ուժերի ցրումը միշտ բերել է և բերում է անհաջողություն, Ահա ինչու անհրաժեշտ է հետազայում ավելի ևս կենտրոնացնել ուժերը, ավելի խորացնել աշխատանքը, խուսափել բազմաթեմայնությունից:

Մենք պետք է լայնորեն կիրառենք ժամանակակից գիտության առավել էֆեկտիվ գիտական մեթոդիկան, տիրապետենք էքսպերիմենտալ նորագույն տեխնիկային, հաղորդելով կուտակված փորձը մեր երիտասարդությանը:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միշտ հայտնել են իրենց վստահությունը սովետական գիտության զարգացման նկատմամբ:

Հայաստանի գիտության աշխատողները, կազմելով Սովետական Միության գիտության աշխատողների անբաժան մասը, հետազայում ևս համառ աշխատանքով պետք է հասնեն նոր նվաճումների և արդարացնեն այդ վստահությունը: